Էլ-975

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«29» 01 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 012-24

Ձեռնարկողը՝ ***«ՀՍԿԱ» ՓԲԸ***
ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Լենինգրադյան փ.,/շ/31/

Գործունեությունը՝ ***Թլիկի շինարարական ավազների հանքերևակման Հյուսիսային տեղամասում 2024-2025թթ. ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Իսաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 012 - 24

«29» հունվարի 2024թ.

Թլիկի շինարարական ավազների հանքերևակման Հյուսիսային տեղամասում 2024-2025թթ. ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝	«ՀՍԿԱ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Արևուտ համայնք Թլիկ բնակավայր

Ներածական մաս. Արագածոտնի մարզի Թլիկի շինարարական ավազների հանքերևակման Հյուսիսասային տեղամասում «ՀՍԿԱ» ՓԲԸ-ի կողմից նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման նախագիծը կազմելու համար ելակետային տվյալներ են հանդիսացել նախկինում կատարված աշխատանքների հաշվետվությունները և ֆոնդային նյութերը:

Նախատեսվող գործունեությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի «ա» ենթակետի՝ դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է բացահայտել տեղամասի արդյունաբերական նշանակությունը, ավազի որակական հատկանիշները որպես հումք շինարարական խճի և ավազի, ինչպես նաև ճանապարհաշինարարական աշխատանքների հումքի արտադրության համար:

Նկարագրական մաս. Թլիկի շինարարական ավազների հանքերևակման Հյուսիսային տեղամասի տարածքը զբաղեցնում է շուրջ 100 հա մակերես և գտնվում է Թլիկ բնակավայրի վարչական տարածքում, որի մոտակա սահմանը գտնվում է Թլիկ բնակավայրից 0.9 կմ դեպի արևելք, մոտակա գյուղերից՝ Անիպեմզա բնակավայրից 2.65 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Անիավան բնակավայրից՝ 4.2 կմ դեպի հյուսիս-հյուսիս-արևմուտք: Հայցվող տեղամասի անմիջական հարևանությամբ անցնում է Երևան-Արմավիր-Գյումրի ճանապարհը՝ 335 մ և Երևան-Գյումրի երկաթգիծը՝ 68 մ:

Ուսումնասիրության տարածքը տեղակայված է 1350-1400 մ բացարձակ բարձրության վրա, իրենից ներկայացնում է լեռնային տարածք, արևելյան մասերում՝ կտրտված ռելիեֆով:

Աշխարհագրական կոորդինատները հետևյալն են՝
հյուսիսային լայնության- 40°25'12.55"
արևելյան երկայնության- 43°38'34.45"

Տարածքի ծայրակետերի կոորդինատները՝ ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

	Y	X
1.	8384135.0646	4476647.8933
2.	8384120.1865	4477431.4056
3.	8385288.6712	4477722.4326
4.	8385483.8267	4477303.0863
5.	8385252.2474	4476868.3129
6.	8384794.3338	4476662.5573
7.	8384776.6152	4476797.5859
8.	8384526.4284	4476722.2211
9.	8384480.1316	4476927.9195
10.	8384333.6579	4476903.9548
11.	8384206.7718	4476648.8964
1.	8384135.0646	4476647.8933

Դիտարկվող տարածքում և շրջակայքում բացակայում են աղբյուրները և հոսքերը: Բուն ուսումնասիրվող տարածքում բացակայում են սողանքային երևույթները:

Ուսումնասիրվող տարածքը ընկնում է ծանր մետաղներով թույլ աղտոտված գոտում:

Համաձայն հայտի տեղեկատվության ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Ուսումնասիրվող տարածքի մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, տարածքը անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ:

Թլիկի շինարարական ավազների հանքերևակման տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմվել է հաշվի առնելով տեղամասի երկրաբանական կառուցվածքը, մորֆոլոգիական ձևը, ուսումնասիրվող տարածքի չափերը, հանքերևակման ավազաշերտի սպասվող հզորությունը, տեղամասի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանները, տարածքի լեռնատեխնիկական պայմանները:

Համաձայն ուսումնասիրությունների ծրագրի Թլիկի երկրաբանական ուսումնասիրությունները կիրականացվեն 1:1000 մասշտաբով երկրաբանական և տոպոգրաֆիական հանութագրմամբ, ինչպես նաև հետախուզական ցանցով՝ հետախուզահորերի անցմամբ և նմուշարկմամբ:

Համաձայն տարածքում նախկինում իրականացված ուսումնասիրությունների արդյունքի՝ ԱԿԽ-ի շերտի հզորությունը միջինում կազմում է՝ 1.2 մ:

Օգտակար հանածոյի հատիկաչափական կազմի և ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով, նախատեսվում է նմուշարկել բոլոր հետախուզահորերը՝ օգտակար հանածոյի շերտին հատող ուղղաձիգ ուղղությամբ:

Երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքները թույլ կտան օգտակար հանածոյին տալ որակական և քանակական գնահատական՝ հաշվարկելով հանքավայրի պաշարները՝ համաձայն B և C1 կարգերի: Օգտակար հանածոյի շերտին որակական և քանակական գնահատական տալու նպատակով նախատեսվում է վերգետնյա լեռնային փորվածքների (հետախուզահորերի) անցում՝ նախատեսվում է իրականացնել հետախուզահորերի անցում ուսումնասիրությունների ամբողջ տարածքում՝ Ավազի և ավազակոպճային հանքավայրերի հետախուզման ժամանակ կիրառվող հետախուզական

փորվածքների ցանցի խտությանը ներկայացվող պահանջներին համապատասխան ցանցի խտությամբ, որի արդյունքում կբացվեն ընդհանուր 35-40 հետախուզահորեր 2x2 մ հատույթի մակերեսով (ընդհանուր բոլոր հետախուզահորերի մակերեսները միասին կլինեն 160 մ²) և մինչև 6մ, որոնք ենթադրում են 960 մ³ ընդհանուր ծավալով լեռնային աշխատանքներ, ընդամենը 40 հետախուզահորեր 6մ նախատեսված խորությամբ՝ 240 գծ.մ լեռնային աշխատանքներ, որի արդյունքում կիրականացվի ընդամենը 960 մ³ ծավալով փորման աշխատանքներ:

Մանրամասն երկրաբանական փաստագրման կենթարկվեն բոլոր 40 հետախուզական փորվածքները:

Հետախուզական աշխատանքների արդյունքում նախատեսվում է վերցնել թվով 40 շարքային նմուշներ և 4 կրկնօրինակ նմուշներ, որոնք կվերցվեն համախառն նմուշարկման միջոցով՝ ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Կիրականացվեն նաև քիմիական և միներալապետրոգրաֆիական կազմի որոշման ուսումնասիրություններ՝ յուրաքանչյուրը 4 նմուշների միջոցով (ընդհանուր 8 նմուշներով):

Ընդհանուր թվով կվերցվեն 52 նմուշներ, նմուշները կվերցվեն ակոսային եղանակով՝ օգտակար հանածո հանդիսացող ավազաշերտին ուղղաձիգ հատող ուղղությամբ՝ յուրաքանչյուրը 0,1 մ³ ծավալով, որը բազմափուլ կրճատումից հետո կդառնա 15կգ: Յուրաքանչյուր նմուշի ծավալն բազմափուլ կրճատումից հետո կկազմի մոտ 0,01 մ³, իսկ բոլոր 44 նմուշների ընդհանուր ծավալն կկազմի 44 0,44 մ³ /կամ 660 կգ:

ԱԿԽ-ի ծավալային զանգվածի և փխրեցման գործակցի որոշումը նախատեսվում է իրականացնել դաշտային պայմաններում՝ հետախուզահորերի անցմանը զուգընթաց:

Օգտակար հանածոյի լաբորատոր ուսումնասիրությունները կկատարվեն «Շինսերտիֆիկատ» լաբորատորիայում, իսկ քիմիական և միներալապետրոգրաֆիական ուսումնասիրությունները կիրականացվեն ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում:

Փաստագրման և նմուշարկման աշխատանքների ավարտից հետո բոլոր լեռնային փորվածքներում կիրականացվի փորված զանգվածի հետ լցում ամբողջ ծավալով: Հետախուզահորերից առաջացած ընդհանուր 960 մ³ ծավալով զանգվածից 0.4 մ³ ծավալով զանգվածը որպես նմուշ կուղարկվի լաբորատոր փորձարկումների նպատակով, իսկ մնացածը՝ 959.6 մ³ հետ կլցվի հետախուզահորեր:

Տարածքի հողաբուսական ծածկը միջինում ունի 0,2 մ հզորություն, որը նախապես կպահեստավորվի և կօգտագործվի հետախուզահորերի ռեկուլտիվացիոն աշխատանքների համար:

Հետախուզահորերի հետլցման և վերականգնման աշխատանքները կիրականացվեն պայմանագրային հիմունքներով՝ էքսկավատորի միջոցով:

Խմելու ջուրը նախատեսված է շշալցված տարբերակով, տեխնիկական ջուրը կմատակարարվի ջրցան լվացող ավտոմեքենայով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքերի իրականացման ընթացքում մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ:

Հիմնական բնապահպանական ռիսկեր կարող են հանդիսանալ՝ հետախուզաառուների տարածքներում բուսականության ոչնչացումը, փոշու արտանետումները՝ հողային աշխատանքների արդյունքում, դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ, տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում առաջացող աղմուկը, ծանր տեխնիկայի շահագործման և կայանման ընթացքում վառելիքի և քսայուղերի արտահոսքերը, որոնց բացառման, նվազեցման ու փոխհատուցման համար նախատեսվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Մթնոլորտային օդի աղտոտման աղբյուր կարող է հանդիսանալ աշխատանքներն իրականացնող տրանսպորտային և տեխնիկական միջոցների շարժիչներից արտանետվող ծխագազերը: Հնարավոր է փոշու արտանետում ճանապարհների բարեկարգման և հորատման աշխատանքների ընթացքում, եթե աշխատանքները կատարվեն չոր եղանակների ընթացքում: Աշխատանքների իրականացման ժամանակ կկիրառվի էքսկավատոր:

Մթնոլորտային օդը հնարավոր աղտոտող հիմնական նյութեր կարող են լինել փոշին և շահագործվող տեխնիկա-տրանսպորտային միջոցներից առաջացրած ծխագազերը: Նախատեսվում է հողային աշխատանքների իրականացում հնարավորինս խոնավ եղանակներին և աշխատանքների դադարեցում քամու առկայության դեպքում: Չոր եղանակներին գրունտային ճանապարհների վրա մեքենաների երթևեկության առավելագույն արագության սահմանափակում 20 կմ/ժ-ը: Ծխագազերի արտանետումներով մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործվում սարքին վիճակում, պլանային տեխնիկական ստուգումների իրականացում: Դիզելային շարժիչների ապահովում ծխագազերի վնասակար արտանետումների կլանիչներ: Անհրաժեշտության դեպքում ճանապարհների ջրցանում՝ ջրցան մեքենայով չոր եղանակին՝ օրական 2 անգամ, անհրաժեշտության դեպքում կիրառում հակահիդեհային միջոցառումներ:

Աշխատանքների ընթացքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, քանի որ դրանց ինտենսիվությունը ցածր է և կարճատև, ապա աղմուկի մակարդակը նույնպես բարձր չի լինի: Հաշվի առնելով դիտարկվող տարածքի հեռավորությունը բնակավայրերից, ընտրված տեխնիկան և դաշտային աշխատանքների կարճ ժամանակահատվածը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը բնակավայրի սահմաններում կգտնվի նորմայի սահմաններում (նորման 45դԲԱ): Աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով աղմկահարույց մեքենաները և սարքավորումները օգտագործելուց՝ անհրաժեշտության դեպքում կտեղադրվեն խլացուցիչներ:

Հետախուզաորոնողական աշխատանքների ընթացքում չեն առաջանա արտահոսքեր: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունն նվազեցնելու նպատակով՝ փոշենստեցման համար նախատեսվում է ջրցանի այնպիսի ծավալների իրականացում, որը չի առաջացնի արտահոսք:

Երկրաբանահետախուզական աշխատանքների համար նախատեսված տեխնիկական միջոցների աշխատանքների արդյունքում առաջացող լոկալ թրթռումը առողջապահական ռիսկեր չի առաջացնի:

Բացված լեռնային փորվածքները, բնապահպանական և անվտանգության նկատառումներից ելնելով, երկրաբանական փաստագրումից, ֆոտո-փաստագրումից և նմուշարկումից անմիջապես հետո փակվելու և վերականգնվելու են: Ռեկուլտիվացման աշխատանքները կատարվելու են ձեռքով:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով հետախուզաառուների անցման ժամանակ հողի շերտը կհանվի և կպահեստավորվի (հողաշերտերը կպահվեն յուրաքանչյուն բացված հետախուզաառվի անմիջապես հարևանությամբ), բուսահողի պահեստավորում չի նախատեսվում: Աշխատանքների ավարտից անմիջապես հետո՝ բացված լանդշաֆտները կվերականգնվեն պահեստավորված հողաշերտերով՝ ծածկելու միջոցով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը կհաշվարկվի վերգետնյա լեռնային փորվածքների վերին շերտի մակերեսից, իսկ հողաշերտը կվերականգնվի 0.20 մ հզորությամբ: Ռեկուլտիվացիայի ենթակա հողի ընդհանուր 160 մ^2 մակերեսում հողի ծավալը կկազմի՝ 32մ^3:

Ռեկուլտիվացիայի աշխատանքների արժեքը կկազմի 267963.4 ՀՀ դրամ:

Տարածքում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, քանի որ ուսումնասիրվող տարածքը հանդիսանում է ինտենսիվ տնտեսական յուրացման գոտի, գտնվում է ճանապարհի հարևանությամբ, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, տարածքը գրեթե զուրկ է բուսական ծածկույթից, հետևաբար

02543163
ՓՈՐՁԱՓՈՐՁԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

կենսաբազմազանության վրա ազդեցությունը էական չէ, ըստ հայտի հնարավոր ազդեցությունների համար նախատեսվում են մեղմացնող մի շարք միջոցառումները:

Երկրաբանահետախուզական աշխատանքների փուլում առաջացող թափոններն են՝ իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ, բանեցված օդաճնշիչ դողեր, բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, յուղոտված լաթեր, կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի/:

Երկրաբանական աշխատանքների տեղամասերում թափոնների կուտակում կամ պահեստավորում չի նախատեսվում, դրանք առաջանալուց հետո անմիջապես կենթարկվեն տեղափոխման: Աշխատանքների ընթացքում գոյացող թափոնների առաջացման հակիրճ բնութագրերը, թափոնների քանակների, տարեկան ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը, նախատեսվող բնապահպանական և կառավարմանն ուղղված միջոցառումները ներկայացված, նկարագրված են հայտում, թափոնների կառավարման պլանում:

Համաձայն հայտի նախատեսվում են նաև անբարենպաստ պայմանների, հնարավոր արտակարգ ու վթարային իրավիճակների դեպքում մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք տրված և նկարագրված են հայտի համապատասխան բաժիններում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ազդեցությունը մեղմելու, նվազեցնելու նպատակով նախատեսվում է նաև մշտադիտարկումների պլան, որի միջոցով հնարավոր կլինի ժամանակին և հավաստի տեղեկատվություն ստանալ շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների վրա (հող, ջուր, օդ, կենսաբազմազանություն) եղած բոլոր ազդեցությունների վերաբերյալ և ժամանակին կարգավորել՝ սահմանափակել դրանք: Շրջակա միջավայրի պահպանության նպատակով՝ մշակված մեղմացնող միջոցառումները նախատեսվում են աշխատանքների ընթացքում:

Նախատեսվող մշտադիտարկումների օբյեկտերը, մշտադիտարկումների վայրը, ցուցանիշները, մտադիտարկումների տեսակը և նվազագույն հաճախականությունը ներկայացված է հայտում ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 500000 ՀՀ դրամ:

Պարզառաբանական մաս. օրենսդրությամբ սահմանված կարգով նախնական գնահատման և փորձաքննության փուլերում Արագածոտնի մարզի Թլիկ բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների՝ հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մշտադիտարկումներ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
3. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
4. Անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
5. Ապահովել և պահպանել բնապահպանական և մշտադիտարկումների ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը, բնապահպանական պահանջների կատարումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՀՍԿԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Թլիկի շինարարական ավազների հանքերևակման Հյուսիսային տեղամասում 2024-2025թթ. ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան